Կարծիք Սահակյան Հրանուշ Ալբերտի «Գերմանա-հայկական ընկերության հիմնադրումը և գործունեությունը 1914-2014 թթ.» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հայ-գերմնական հարաբերություններն ունեն բավական երկար պատմություն և այդ ընթացքում կուտակված պատմական փորձ: Հայաստանի Առաջին Հանրապետության կարճ ժամանակահատվածից հետո, որն ընդմիջվեց շուրջ 70 տարվա խորհրդային ժամանակաշրջանով, Երրորդ հանրապետության պատմության մեջ Գերմանիան հետզհետե իր նկատելի տեղն է զբաղեցնում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության, տնտեսական փոխրաբերությունների և մշակութային ու գիտական առնչությունների ասպարեզներում: Այդ առումով կարևոր և միաժամանակ հետաքրքրական է ունենալ հայ-գերմանական հարաբերությունների վերաբերյալ հնարավորինս լիարժեք պատկեր, որը ներառում է վերը նշված բոլոր կողմերը: Այդ գործում իրենց ուրույն աշխատանքի բաժինն ունեն պատմաբանները՝ փաստերի մեկտեղման, պատմական կարծրատիպերի փաստարկված հաղթահարման և դեռևս անհայտ դրվագների լուսաբանման առումով:

19-րդ դարի վերջին տասնամյակներից Գերմանիան սկսում է ակտիվորեն ներթափանցել Օսմանյան կայսրություն: 1871 թ. միավորումից հետո որոշ պահից սկսած այն պարբերաբար ցանկանում էր իր բաժինը ստացալ գաղութների համար պայքարում: Օսմանյան կայսրությունը դիտարկվում էր եթե ոչ որպես հավանական գաղութ, ապա որպես տեղ, որտեղ հնարավոր էր ծավալել տնտեսական և ռազմաքաղաքական ակտիվ գործունեություն: Եվ ռազմական համագործակցությունը նման քաղաքականության անցկացման ամենահարմար մեկնակետն էր: Այն իր հետևից բերեց խոշոր պատվերներ Գերմանիայի ռազմաարդյունաբերական համալիրի համար, երկաթուղիների կառուցմանն ուղղված փոխառություններ, առևտրային ձեռնարկներ և այլն: Սկզբնական շրջանում նպատակ կար նաև միսիոներական շարժումը ծառայեցնել այդ քաղաքականությանը: Սակայն պարզվեց, որ պաշտոնական և մարդասիրական Գերմանիաների հայացքներն

Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ, հատկապես հայերի հանդեպ թուրքական իշխանությունների վարած քաղաքականության հարցում, զգալիորեն տարբերվում էին: Այդ հատկապես վառ արտահայտվեց Հայոց ցեղասպանության տարիներին: Կայսերական Գերմանիայի քաղաքականությունն ու դիրքորոշումը Հայկական հարցի և Օսմանյան կայսրության հայերի ճակատագրի հանդեպ հաճախակի տարակուսանք էր հարուցում, իսկ երբեմն դառնում էր բացահայտ թուրքամետ: Սակայն կարևոր է նշել, որ պաշտոնական Գերմանիային զուգահեռ կար մեկ այլ Գերմանիա՝ որի մաս էին կազմում կրոնական շրջանակները, միսիոներները, մշակույթի և գիտության ներկայացուցիչները և ուղղակի սրտացավ գերմանացիք, որոնք 1894-1896 թթ. հայկական կոտորածներից մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը զգալի աշխատանք են կատարել՝ հայերին օգնելու և աջակցելու համար:

Այդ ուղղության նշանակալի ներկայացուցիչներից էր Գերմանա-հայկական ընկերությունը (հետայսու՝ ԳՀԸ), որի անցած հարյուրամյա (շուրջ երեսնամյա դադարով) ուղուն էլ նվիրված է սույն ատենախոսությունը:

Ատենախոսության ընդհանուր ծավալը 194 էջ: Այն բաղկացած է երեք գլխներից, որոնցում ներկայացվում է ԳՀԸ 100-ամյա գործունեությունը՝ բաժանված երեք ժամանակային փուլերի՝ հիմնադրումից մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը (1914-1918), Առաջին աշխարհամարտի ավարտից մինչև ԳՀԸ գործունեության կասեցումը (1918-1956) և վերստեղծումից (1973) մինչև 2015 թ.:

Ատենախոսության մեջ առաջին անգամ մեկտեղված ներկայացվում է ԳՀԸ մեկդարյա պատմությունը: Այն իրականացված է բավական լայն աղբյուրագիտական հենքի վրա, ընդ որում որոշ նյութեր առաջին անգամ են դրվում գիտական լայն շրջանառության մեջ: Ատենախոսին հաջողվել է հետևողականորեն ներկայացնել ԳՀԸ պատմության ընթացքը և գործունեության մանրամասները: Սա առաջին նմանատիպ հետազոտությունն է ԳՀԸ-ի վերաբերյալ, որտեղ շարադրված են ոչ միայն հետազոտողներին քիչ թե շատ հայտնի փաստերը Ընկերության գործունեության վերաբերյալ, այլ նաև մինչ այժմ գրեթե անհայտ տեղեկություններ: Արդյունքում ստացվել է մի աշխատանք, որը կարող է մեծապես

օժանդակել Գերմանիայում ծավալված հայանպաստ մարդասիրական շարժման հետագա ուսումնասիրությունների համար:

Շարադրանքի փաստագրական հագեցվածության առումով որոշակի խզվածք է նկատվում առաջին երկու գլուխների և երրորդ գլխի միջև: Սակայն դա ունի իր օբյեկտիվ պատճառները: Նախ, առաջին երկու գլուխներում ներկայացվում է ԳՀԸ գործունեությունը Առաջին աշխարհամարտի, Հայոց ցեղասպանության, միջպատերազմական ժամանակահատվածի և Երկրորդ աշխարհամարտի տարիներին: Եվ հետո ԳՀԸ հիմնադիրների մեջ կային այն ժամանակ Գերմանիայում և դրա սահմաններից դուրս լայն ճանաչում ունեցող անհատներ: Սակայն ատենախոսին հաջողվել է ԳՀԸ վերստեղծման և գործունեության հատվածը նույնպես ներկայացնել պատշաճ մակարդակով:

Վերը նշված դրական կողմերին զուգահեռ կցանկանայինք անել որոշ դիտարկումներ:

1. Ներածության մեջ ատենախոսը, նշելով, թե ինչո՞ւ առաջ նպաստավոր պայմաններ չեն եղել հայ-գերմանական հարաբերությունների, և մասնավորապես, ԳՀԸ պատմության ուսումնասիրման համար, թվարկում է այն հանգամանքները, որոնք հետխորհրդային ժամանակաշրջանում նպաստել են վերը նշված թեմաների ավելի խորը և բազմակողմանի ուսումնասիրությանը (էջ 4): Դրանց շարքում հիշատակվում է Գերմանիայի կողմից Հայոց ցեղասպանության հարցում իր բաժին պատասխանատվության ընդունումը՝ նշելով 2016 թվականին Բունդեսթագի ընդունած բանաձևը: Գտնում ենք, որ այդ բանաձևի համար ճանապարհ էր հարթել 2005 թվականին ընդունված առաջին բանաձևը, որտեղ արդեն կան սեփական պատասխանատվությունն ընդունելու նախադրյալները: Ուստի կարելի էր հիշատակել նաև առաջին բանաձևը:
2. Ցանկալի կլիներ, որ առաջին գլխում առանձին ենթագլխով հակիրճ ներկայացվեր պաշտոնական Գերմանիայի դիրքորոշումը հայերի հանդեպ 19-րդ դարի վերջից սկսած մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը և դրան զուգահեռ գերմանական կրոնական և հասարակական շրջանակների դիրքորոշումը և հայանպաստ շարժման ձևավորումը:

3. Առաջին գլխի երկրորդ ենթագլխում (Ընկերությունն Առաջին աշխարհամարտի բռնկումից հետո: Հայ կամավորական շարժումը կասեցնելու փորձերը և դր. Լիպարիտի առաքելությունը), խոսելով ԳՀԸ կողմից հայկական կամավորական շարժումը կանխելուն ուղղված քայլերի մասին, ատենախոսը նշում է, որ այն օգտագործվեց երիտթուրքական վարչակարգի կողմից որպես պատրվակ՝ Հայոց ցեղասպանությունն իրականացնելու համար: (էջ 34) Նույն միտքը կրկնվում է նաև եզրակացության մեջ: Մասնավորապես, նշվում է. «ԳՀԸ-ն դեմ էր Կովկասում հայ կամավորական շարժման ծավալմանը և փորձեց կանխել այն՝ կարծելով, որ այդ շարժումը կարող էր ծանր անդրադարձում ունենալ արևմտահայերի վիճակի վրա: Եվ, իրապես, հայ կամավորական շարժման հետևանքը եղավ այն, որ երիտթուրքերն առիթ ունեցան հայերին ներկայացնելու որպես «դավաճաններ», «հեղափոխականներ» և պատերազմի քողի տակ իրականացնել արևմտահայերին բնաջնջելու՝ վաղուց կազմած իրենց ծրագիրը»: (էջ 170) Այստեղ որոշակիորեն առկա է ձևի և բովանդակության հակասություն: Իրոք, հայկական կամավորական շարժումը, ինչպես նաև հայերի ինքնապաշտպանական մարտերը թուրքական կողմից լայնորեն օգտագործվում էին որպես հայերի համատարած դավաճանության «ապացույցներ»: Սակայն թե՛ առաջինը, թե՛ երկրորդը հանդիսանում էին հետևանք հայերի դեմ իրականացվող թուրքական իշխանությունների քաղաքականության և ոչ թե պատճառ: Ուստի ձևակերպման մեջ կարելի է ավելի զգուշավոր լինել, ակամա չկրկնելու համար թուրքական ժխտողականության խոսույթները:

4. 1916 թ. Լեփսիուսի կազմած Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei աշխատությունը ատենախոսության մեջ ներկայացվում է որպես գրքույկ: (էջ 51, նաև էջ 75) Կարծում ենք, որ թե՛ ծավալի, թե՛ իր նշանակության առումով այս բնորոշումը տեղին չէ:

5. Առաջին գլխի չորրորդ ենթագլխում (Հայկական հարցը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1917-1918 թթ. և ԳՀԸ-ն) նշվում է 1918 թ. հունվարի 6-ին Գերմանիայի ռայխսկանցլեր Գեորգ ֆոն Հերտլինգին ուղղված խնդրագրի մասին,

որը ստորագրել էին Պ. Ռոհրբախը, Է. Շթիրը և Մ. Ռադեն: Դրանում նշվում էր, որ Արևմտյան Հայաստանից ռուսական զորքերի դուրսբերումը այնտեղ բնակվող հայերի համար կդառնար նոր ողբերգություն, եթե նրանց անվտանգությունը չապահովվեր և խնդրում էին չխոչընդոտել Արևմտյան Հայաստանում հայկական ինքնավարության ստեղծելուն: Որպես ասվածի հիմնավորում նշվում էր նաև այն փաստը, որ Գերմանիան միայն հայանպաստ քայլերով կարող էր վերջ դնել «Հայոց ցեղասպանության մեջ իր ուղղակի պատասխանատվության վերաբերյալ Անտանտի և չեզոք երկրների կողմից հնչող մեղադրանքներին»: (էջ 61) Բնօրինակում նշված է գերմաներեն Ausrottung բառը, որը հայերեն թարգմանվում է բնաջնջում: Գտնում ենք, որ ճիշտ կլիներ հենց այդ եզրն օգտագործել (հայերի բնաջնջում), քանի որ ցեղասպանություն բառը ստեղծվել է 1944 թ.: Արդյունքում փասթաթղթում ներկայացված հիմնավորումը այն ժամանակվա բառամթերքին համապատասխան և ներդաշնակ կհնչեր:

6. 2-րդ գլխի 3-րդ ենթագլխում (Արտերկրում հայերի հանդեպ հալածանքների կանխարգելման, նրանց ազգային ինքնության պահպանման ու զարգացման ուղղությամբ ընկերության կողմից մղվող պայքարը և նրա լուծումը (1933-1956 թթ.)), խոսելով արտերկրում հայերի հանդեպ հակածանքների կանխարգելման ուղղությամբ ԳՀԸ տարվող աշխատանքների մասին, նշվում է, որ 1939 թ. Armeniertum – Ariertum գիրքը իտալերեն թարգմանությամբ լույս է տեսնում Հռոմում, ինչի շնորհիվ Իտալիայում բնակվող հայերը պաշտոնապես ընդգրկվում են արիական ժողովուրդների անվանացանկում: Ամփոփելով այս հատվածը՝ հեղինակը նշում է, որ «ԳՀԸ-ի ծավալած գործունեության արդյունքում նացիստական երկրներում բնակվող հայերը փրկվում են հերթական անգամ ցեղասպանության ենթարկվելու վտանգից…»: (107) Եզրակացության մեջ նույնպես Իտալիան հիշատակվում է որպես նացիստական երկիր (էջ 172): Կարծում ենք, որ Իտալիան դասել նացիստական երկրների շարքում այդքան էլ տեղին չէ:

7. 3-րդ գլխի 2-րդ ենթագլխում (Ընկերության իրականացրած աշխատանքները 1988-1999 թթ.), խոսելով 1990 թ. Բաքվի ջարդերի մասին, ատենախոսը նշում է, որ

57

«գերմանախոս միջավայրում գործող հայկական կազմակերպությունները դիմումներ են հղում Միխաիլ Գորբաչովին՝ պահանջելով վերջապես արդար լուծում տալ Արցախյան խնդրին»: (էջ 136) Ցանկալի կլիներ, որ ատենախոսը նշեր այդ կազմակեպությունների անունները:

8. Նույն ենթագլխում հիշատակվում է 1995 թվականի նոյեմբերի 23-ին "Deutsche Bank"-ի Մայնի Ֆրանկֆուրտի կենտրոնակայանում և 1996 թվականի փետրվարի 29-ին "Deutsche Bank"-ի Բեռլինի կենտրոնակայանում տեղի ունեցած և Հայաստանին նվիրված ինֆորմացիոն միջոցառումները (էջ 146-147) Շարադրանքից պարզ չէ՝ ի՞նչ կապ ուներ ԳՀԸ-ն այդ միջոցառումների հետ:
9. Երրորդ գլխի երրորդ ենթագլխում (ԳՀԸ-ի գործունեությունը 21-րդ դարի առաջին մեկուկես տասնամյակում), ի թիվս այլ հարցերի, խոսվում է Բունդեսթագի՝ 2005 թվականի բանաձևի մասին՝ դրա ընդունման շարժառիթների և թուրքական ու հայկական կողմերի արձագանքի մասին (էջ 155-158): Բովանդակային առումով ճիշտ լինելուն զուգահեռ այս հատվածը որոշակիորեն դուրս է մնում ենթագլխի շրջանակներից:

Նշված դիտարկումները չեն ստվերում Սահակյան Հրանուշի կողմից իրականացված աշխատանքը: Ատենախոսությունը բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է իր հայցած գիտական աստիճանին, որի համար միջնորդում ենք և մաղթում բարի ընթացք:

Պաշտոնական ընդդիմախոս՝ պ.գ.թ. Արամ Միրզոյան (ՀՑԹԻ հիմնադրամ)

Հաստատում եմ՝ ՀՑԹԻ հիմնադրամի գիտքարտուղար, պ.գ.թ. Նարինե Մարգարյան

13.09.2023 թ.